ՄԻԼԱԿԵՐՏ

Դրախտակից դէպի արևմուտք, երեք քառորդ ֆարսախ հեռու, մի ընդարձակ դաշտի վրայ փռուած է Հայաբնակ Միլակերտը, որն իր դիրքով խիստ բանաստեղծական մի պատկեր է ներկայացնում. առաջն և կողքերին տարածուում են ուռենիների և կաղամախիների տնկարաններով զարդարուած արտերը, իսկ արևելեան կողմից անցնում է Բալասան գետակը, որն օձապտոյտ հոսելով ոռոգում է Միլակերտի դաշտավայրերը և ապա շարունակելով իր ճանապարհը խառնուում է Զայենդէրուդին և այնտեղից թեքուում դէպի Նոր—Զուղա։

Գիւղն երկու հարիւր տարուայ հիմնարկութիւն է. բնակիչները գաղթել են Ադիգան, Սնկերտ և Հադան գիւղերից. նրանք ընդհանրապէս անմիաբան են։ Այժմ բաղկացած է գիւղը 97 տնից 623 շնչով, որի 324-ը արական է և 299-ը իգական։ Տները մեծ մասամբ մի յարկանի են, իսկ խմելու ջուրն աղբիւրի է, որը բղխում է գիւղի փէշերից։

Հողը խանական է. պատկանում է Միրզա Մէհդի խանին. հայերից միայն տասը տուն հող ունեն, իսկ մնացեալները մշակում են աղալի հողերը, որից ստացած արդիւնքի $^1/_3$ մասը տալիս են նրան. մօտաւորապէս տարեկան 200 խալւար ցորեն տալիս, բացի այդ՝ 200 թուման էլ պետական հարկ են վճարում։ Հողը վարում են արօրով և ցանում նոյն հացաբոյսերը։

Գիւղն ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին, որի բակում գտնուում է դպրոցը. դա երեք սենեակից բաղկացած փոքրիկ մի շինութիւն է, ուր երեք տարի առաջ սովորում էին 100-ից աւելի երկսեռ աշակերտներ։ Այժմ եկեղեցին և դպրոցը կիսաքանդ են։

Այս գիւղը, 1916 թուին քարուքանդ է լինում։ Սալար Մասուդ և Սալար Ազամ խաներն աւելորդ գլխահարկ են